

Հայաստանի Հանրապետության

Ոստիկանության պետ Վ. Գասպարյանին

Պարոն ոստիկանապետ,

Սույնով Ձեր անմիջական քննարկմանն եմ ներկայացնում 2016թ. հուլիսի 29-ին Գյումրու Թատերական հրապարակում տեղի ունեցած խաղաղ հավաքի ժամանակ ոստիկանական ուժերի կողմից այդ հավաքի մասնակիցների նկատմամբ բռնի ուժի կիրառման և այլ ապօրինությունների վերաբերյալ մեր կազմակերպության հաղորդագրությունը:

Հարցի էությունը կայանում է հետևյալում՝

2016թ. հուլիսի 29-ին Գյումրու Թատերական հրապարակում ինքնաբուխ, խաղաղ հավաքը, որը կազմակերպվել էր մի խումբ քաղաքացիների կողմից՝ ի սատարումն «Սասնա Շոեր» խմբավորման անդամների և Երևանում ընթացող ամենօրյա բազմահազարանոց ցուցարարների պահանջների, որոնց մասին մեզ հայտնի է բոլորիս, խուլիգանական խմբի սադրիչ գործողությունների արդյունքում այն տեղի չունեցավ, չկայացավ նաև երթը: Արդյունքում ոստիկանական ուժերի կողմից բերման ենթարկվեցին ինչպես խաղաղ հավաքի մասնակիցներ, այնպես էլ հավաքին մասնակից չդարձած քաղաքացիներ (անցորդներ): Բերման ենթարկվածների թվում էր նաև իրավապաշտպան, «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար Սեյրան Մարտիրոսյանը:

«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»-ը դատապարտում է և հայտնում է իր վրդովմունքը ոստիկանության անհամաչափ գործողությունների և առանց պատշաճ հիմքերի մարդկանց բռնի ուժով բերման ենթարկելու, ինչպես նաև իրավապաշտպանի գործողությունները սահմանափակելու և խոչընդոտելու կապակցությամբ: Ոստիկանության նման գործելակերպը հակասում է ոչ միայն մարդու իրավունքների ազգային, այլ նաև միջազգային նորմերին.

- Խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված՝ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը,

- Խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված հավաքների և միավորման ազատության իրավական նորմը,

- Խախտվել է Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի 32 հոդվածը, մասնավորապես, չի կատարվել կամ պատշաճ կերպով չի կատարվել նույն հոդվածի 1/3 կետով սահմանված ոստիկանի պարտավորությունը՝ հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովումը,

- Խախտվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը՝ ոստիկանության պարտականությունները հասարակական կարգը պահպանելիս,

- Խախտվել է «Ոստիկանության գորքերի մասին» ՀՀ օրենքի պահանջներն ամբողջությամբ:

Տարակուսանք է առաջացնում նաև այն, որ սովորաբար մարդաշատ Թատերական հրապարակում, 29.07.2016թ-ին ժամը 19:00-ից սկսած պատշաճ հերթապահություն չէր իրականացվում ոստիկանների կողմից, ավելին, երբ խուլիգանների (քաղաքացիական համազգեստով սադրիչների) կողմից խաղաղ հավաքը սադրելու քայլեր սկսվեցին, ոստիկանները համապատասխան քայլեր չձեռնարկեցին այն կանխելու ուղղությամբ, նույնիսկ հավաքի մասնակիցների և իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանի կողմից հնչեցված նախազգուշացումները հաշվի չառնվեցին: Արդյունքում, երբ սադրիչ խմբի կողմից լարվածությունը թեժացավ՝ անկանխատեսելի հետևանքներով, համազգեստով ոստիկաններ չկային դեպքի վայրում: Եթե տարածքում կային ոչ համազգեստով ոստիկաններ և ԱԱԾ աշխատակիցներ, ապա դա ենթադրում է, որ գործողությունների այդպիսի ընթացքն ու ավարտը տրվել է նրանց լուռ համաձայնությամբ և մասնակցությամբ:

Ի դեպ, իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանը, ստիպված է եղել Գյումրու Մայաթ-Նովա փողոցում կանգնեցնել պարեկային ոստիկանության մեքենան և խնդրել աջակցություն՝ իրազեկելով խաղաղ հավաքի մասնակիցների/հանրության համար ստեղծվող իրավիճակի վտանգի մասին, քանզի նրանց մեջ էին հայտնվել այնպիսի

անձինք, որոնք սաղրում էին մասնակիցներին, արհեստական վեճ ստեղծում, որպեսզի դադարեցնեին խաղաղ հավաքը և երթը տեղի չունենար, ինչն էլ տեղի ունեցավ: Այս զգուշացնելուց հետո մեքենայում գտնվող ոստիկանության մայրը համապատասխան զանգ է կատարել հերթապահ մաս:

Իրավիճակի սրացումից առնվազն 30 րոպե ուշացումով ժամանած ոստիկանները սկսեցին չհիմնավորված և անհամաչափ ուժ կիրառել խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ, փոխարենը կարգի հրավիրելու և դուրս բերելու այն քաղաքացիներին, որոնք սաղրում էին և ագրեսիվ էին տրամադրված խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ: Արդյունքում, մեկ տասնյակից ավել քաղաքացիներ բերման ենթարկվեցին Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրի և Մուշ բաժիններ:

Իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանը Ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշ բաժին տարվեց 29.07.2016թ. ժամը 21:20–ին և այնտեղ անազատության մեջ պահվեց մինչև 30.07.2016թ. ժամը 00:50–ը: Նշված ժամանակահատվածում Ս. Մարտիրոսյանին չի տրվել որևէ հիմնավորում նրան բաժնում պահելու վերաբերյալ: Ընդամենը 30.07.2016թ. ժամը 00:20–ին կազմվել է արձանագրություն և, խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները, Ս. Մարտիրոսյանին ոստիկանության բաժնից դուրս գալուց առաջ տրվել է Մարդու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին գրավոր ծանուցում, որով հայտնվել է, որ Ս. Մարտիրոսյանին 3 ժամ և ավելի ազատությունից զրկելու հիմք է հանդիսացել ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարելը, այն է՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ձառայողի օրինական պահանջը չկատարելը:

Նշենք նաև, որ Ս. Մարտիրոսյանի կողմից ինչպես հավաքի ընթացքում հնչեցրած, այնպես էլ իրեն բերման ենթարկելու ընթացքում և ոստիկանական բաժնում, ոստիկանների պահանջները (օրինական, թե ոչ օրինական) կատարվել են, չի եղել որևէ անհնազանդություն նրա կողմից: Այդ փաստը ապացուցվում է ինչպես հանրահավաքի ընթացքում նկարահանող ՋԼՄ ներկայացուցիչների նյութերում, այնպես էլ սիրողական տեսանյութերում: Անգամ բաժին տանելուց, ոստիկանը ուժի գործադրմամբ է նրան

տարել ոստիկանական ավտոմեքենան, երբ Ս. Մարտիրոսյանը որևէ դիմադրություն չի ցուցաբերել: Այսպիսով, ոստիկանության կողմից Ս. Մարտիրոսյանի օրինախախտում թույլ տալու մասին արձանագրող որևէ ապացույց ներկայացված չէ նրան: Եթե իրավապաշտպանի նկատմամբ է այսպիսի ապօրինություններ թույլ տրվել, ապա միայն կարելի է պատկերացնել, թե ոստիկանությունն ինչպիսի ապօրինություններ է թույլ տալիս մյուս քաղաքացիների նկատմամբ, որոնք իրազեկված չեն իրենց իրավունքների մասին:

Ելնելով վերոգրյալից, «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը գտնում է, որ 29.07.2016թ. գրավոր ծանուցումը՝ ներկայացված իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանին, ենթակա է վերացման՝ անհիմն լինելու հիմքով և ոստիկանությունը պարտավոր է ներողություն խնդրել ինչպես իրավապաշտպան Սեյրան Մարտիրոսյանից՝ նրան անհիմն ու բռնի ուժով բերման ենթարկելու, ապօրինի անազատության մեջ պահելու, այնպես էլ այն տասնյակ քաղաքացիներից, ովքեր մասնակցել են խաղաղ հավաքին, սակայն իրենց անհայտ ու անհասկանալի պատճառներով բռնի ուժով բերման են ենթարկվել Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրի և Մուշ բաժիններ:

Միննույն ժամանակ, պահանջում ենք, որպեսզի ՀՀ ոստիկանությունը անհապաղ ծառայողական քննություն իրականացնի և կանչի պատասխանատվության այն ոստիկաններին, որոնք այդ օրը, այդ ժամերին և այդ վայրում ոչ պատշաճ ծառայություն են իրականացրել և կիրառել են անհամաչափ ուժ խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ, ինչպես նաև բացահայտի և պատասխանատվության կանչի քաղաքացիական համազգեստով այն անձանց, որոնք սադրել են այդ խաղաղ հավաքի մասնակիցներին և դիտավորյալ ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ, որպեսզի խաղաղ հավաքը և երթը խափանվի:

Մեր ունեցած տվյալներով, ԳԱԼԱ հեռուստաընկերության ներկայացուցիչները տեսանկարահանել են տեղի ունեցած բոլոր ապօրինությունները, տեսանյութը կարող էք պահանջել և ստանալ «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունից:

«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար Սեյրան

03.08.2016
Ե-2446

Մարտիրոսյանը պատրաստ է անձամբ ներկայացնել ոստիկանական ուժերի կողմից իր նկատմամբ թույլ տրված ապօրինությունները:

Ակնկալում եմ ստանալ Ձեր՝ իբրև ՀՀ ոստիկանապետի, արձագանքը սույն հաղորդագրության վերաբերյալ:

Հ. Գ. Միայն խնդրում եմ սույն հաղորդագրությունը չարժանացնել դեռևս 2011թ. հուլիսի 6-ի վաղ առավոտյան մեր կազմակերպության Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի գրասենյակի հրկիզման մասին հաղորդագրության ճակատագրին, որն այդպես էլ մնաց անպատասխան և հանցագործությունը չբացահայտվեց Ոստիկանության կողմից:

Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն